ՊԱՇՏՈՆԱԿԱՆՆ ՈՒ ԱՌՕՐԵԱԿԱՆԸ ՀԱՅ–ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ (ԱՐՑԱԽԻ ՕՐԻՆԱԿՈՎ)[1]

Արտակ Խաչատրյան

Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն ՊՈԱԿ
ՀՀ, Երևան, Օրբելի 23
Էլ. հասցե՝ artak590@gmail.com
Հոդվածը ներկայացվել է 16.02.2020, գրախոսվել է 19.10.2020, ընդունվել է տպագրության 03.11.2020

Ներածություն

Ղարաբաղյան հակամարտությունը դիտարկվել և շարունակում է դիտարկվել տարբեր տեսանկյուններից: Կարծում ենք՝ հակամարտությունն առավել խորությամբ քննելու համար հարկավոր է ուսումնասիրել հայերի և ադրբեջանցիների[2] ոչ վաղ անցյալի առնչակցությունները: Սույն հոդվածում քննարկման առարկա է խորհրդային շրջանը:

Եթե 1918-1920 թթ. ստեղծված անկախ պետականությունների հարաբերություններում արտացոլվում էին նրանց շփումների ու դրանք պայմանավորող մթնոլորտի իրականին մոտ պատկերը, ապա այն զգալիորեն փոխվեց խորհրդային կարգերի հաստատումից հետո: Միջէթնիկ հարաբերություններն արդեն կաղապարվում էին ժողովուրդների եղբայրության, բարեկամության գաղափարական գռեհիկ կարգախոսների կապանքներով[3]: Եվ Խորհրդային Ադրբեջանում արդեն «փափուկ» մեթոդներով վարում էին հանրապետության էթնիկ փոքրամասնությունների նկատմամբ ձուլման քաղաքականություն: Նման գործելակերպն ամենևին էլ խորթ չէր

---

[1] Հոդվածում օգտագործված դաշտային ազգագրական նյութերի մի մասը մեզ է տրամադրվել ազգագրագետներ Մխիթար Գաբրիելյանի և Արտակ Դաբաղյանի՝ առայժմ անտիպ արխիվից, որի համար նրանց հայտնում ենք մեր շնորհակալությունը:

[2] http://www.demoscope.ru/weekly/ssp/sng_nac_39.php?reg=5 (30.03.2020): «Ադրբեջանցիներ» էթնոնիմը պաշտոնական շրջանառության մեջ դրվեց 1936 թ. ԽՍՀՄ սահմանադրության ընդունումից հետո, իսկ 1939 թ. Համամիութենական մարդահամարի տվյալներում առաջին անգամ ամրակայվեց, և սկսվեց դրա շրջանառությունը:

[3] Дзидзоев 2000, 29.

ադրբեջանական ղեկավարությանը, որը ինտերնացիոնալ բարեկամության շղարշի ներքո բավական նպատակադիր կերպով հանրապետության մյուս էթնիկ փոքրամասնությունների՝ լեզգիների, ավարների, ուդիների, թաթերի, թալիշների, քրդերի նկատմամբ վարում էր էթնիկ խտրականության քաղաքականություն[4]: Օրինակ, 1926 թ. մարդահամարի նյութերից բացակայում էին Խորհրդային Ադրբեջանում բնակվող կովկասալեզու հափութլիները, կրիզները, ալիկները, ախվախները, դարգինները, իսկ 1939 թ. մարդահամարում այդ բացակայող էթնիկ հանրությունների ճակատագրին են արժանանում նաև ջեկերը, խինալուղները, բուդուղները և ուդիները[5]: Նման քաղաքականությունը նպատակ ուներ ամրագրելու «Ադրբեջան» անվանված տարածքի նկատմամբ թյուրքախոս շիաների «պատմական իրավունքը», քանզի վերը նշված էթնիկ հանրությունները պատմականորեն այդ տարածքի բնիկներն էին, իսկ ադրբեջանցիների ինքնության մեջ դեռևս թարմ էր/է իրենց ուշ շրջանի եկվոր լինելու գիտակցությունը[6]: Եվ ադրբեջանական ազգաստեղծման տրամաբանության սահմաններում Աղվանքի բնիկ էթնոսները տասնամյակներ շարունակ ներկայացվում էին/են որպես ադրբեջանցիներ՝ չնայած այն հանգամանքին, որ, օրինակ, ուդիները, որ Կովկասյան Աղվանքի բազմաթիվ էթնոսներից են, ոչ վաղ անցյալում՝ XIX դ. սկզբին, դեռևս ընդունում էին ուղղափառություն[7]:

Ներքին լարվածության դրսևորման դրվագները խորհրդային շրջանում

Միջէթնիկ լարվածությունը տարբեր մակարդակներով ու դրսևորումներով հատկապես սկսեց զգացվել 1960-ական թթ.՝ կապված հայ հասարակական ու մտավորական շրջանակներում նշմարվող ազգային զարթոնքի նախանշանների, Հայոց ցեղասպանության հիսնամյա տարելիցին նվիրված իրադարձությունների և Արցախի հիմնախնդրի նոր արծարծումների հետ: Դա, իր հերթին, կարող էր հանգեցնել ազգային զգացումների ակտիվացմանը և, որպես հետևանք, ազգամիջյան լարվածության դեռևս ոչ այնքան տեսանելի, բայց առկա լարվածության աճին: Ընդ որում՝ նաև ԼՂԻՄ-ի տարածքից դուրս: Այս առումով հիշատակության են արժա-

[4] Харатян 2015, 31-34.
[5] Խառատեան 2012, 295:
[6] Харатян 2015, 28.
[7] Арутинов 1905, 6.

նի Արարատի շրջանում կատարված դեպքերը: Նախիջևանում և Զանգակատուն գյուղին հարող տարածքներում, 1960-ական թթ. սկսած, նկատվում էին ոտնձգություններ հայերի նկատմամբ: Գողությունները սովորական երևույթ էին դարձել: Արձանագրվել են նաև հայերի սպանություններ: Արժանահիշատակ է Զանգակատուն համայնքի բանջար հավաքող մի խումբ կանանց և աղջիկների խմբակային բռնաբարությունը 1968 թ.[8]: Խորհրդային իշխանությունները կամք կամ ցանկություն չդրսևորեցին բացահայտելու այդ դեպքը, և այն մոռացության մատնվեց: Այնուամենայնիվ, այդ հանգամանքը չէր կարող որոշակի հետք չթողնել հայերի պատմական հիշողության մեջ:

Կրթամշակութայինը պաշտոնականի և առօրեականի հոլովույթներում

Ղարաբաղյան շարժման սկզբնապատճառների ուսումնասիրությունը հանգեցնում է այն եզրակացության, որ դրա առաջացման համար հիմք ծառայեցին հենց կրթամշակութային հիմնախնդիրները: Կրթական ու մշակութային հայեցակետերը կարևորագույն դեր են խաղում էթնոսի պատմական հիշողության համատեքստում: Կրթական առումով խնդիրը դրսևորվեց հայոց պատմություն առարկայի դասավանդման մեջ: Բանն այն է, որ 1986-1987 թթ. ուսումնական տարում «հայոց պատմությունը» փոխարինվեց «Ադրբեջանի պատմություն» առարկայով[9]: Իսկ հայոց լեզվի դասաժամին յուրաքանչյուր դասարանին ընդամենը երկու դասագիրք տրամադրելու փաստը չէր սպրդել անգամ միութենական մամուլի տեսադաշտից[10]: Եվ սա այն դեպքում, երբ ԼՂԻՄ-ի բնակչության գերակշիռ մեծամասնությունը կազմում էին հայերը, իսկ քանի որ ԼՂԻՄ-ը ստեղծվել էր որպես հայկական ինքնավարություն, ուստի կոպտորեն խախտվում էին ինքնավարությանը հատուկ տարրական նորմերը: Նման կերպով Խորհրդային Ադրբեջանը փորձում էր սեփական շահերին համապատասխան խմբագրման ենթարկել հայոց պատմական հիշողությունը: Նույն ժամանակահատվածում՝ 1987 թ., փորձ էր արվում ԼՂԻՄ-ում կազմակերպել

[8] Խաչատրյան 2008, ԴԱՆ, Արարատ, Զանգակատուն, բանասաց՝ Խաչատրյան Դարիկո:

[9] Դաբաղյան, Գաբրիելյան 1996, ԴԱՆ, Արցախ, բանասաց՝ Ղուկասյան Սևակ, ծնվ. 1969 թ.:

[10] Дардыкин, Лынев 24.03.1988.

«հայոց պատմություն» առարկայի ֆակուլտատիվ դասընթաց, թեև որոշ դասախոսներ և ղեկավարությունը դեմ էին, իսկ գաղափարական շարժիչը Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի (ներկայումս՝ Արցախի պետական համալսարան) պատմության ֆակուլտետն էր: Ընդհանուր առմամբ, դպրոցական կրթությունը նշյալ ժամանակահատվածում ճգնաժամային իրադրության մեջ էր միութենական որոշ հանրապետություններում, ինչպես, օրինակ, Ղրղզստանի մայրաքաղաք Բիշքեկում գործում էր մեկ ղրղզական դպրոց (մնացյալը ռուսական էին), իսկ Բելոռուսիայում փակվում էին բելոռուսական դպրոցները, և այդ պատճառով դժգոհություններին պատասխանում էին, թե կրճատվել է աշակերտների թիվը, ուստի և փակում են[11]: Բերված օրինակները վկայում են, որ, տեղական ներհակություններից բացի, անիրավահավասար քաղաքականություն էր տարվում նաև կենտրոնական՝ միութենական ղեկավարության կողմից: Իհարկե, այս ամենը չէր կարող իր ներգործությունը չունենալ ազգային ընկալումների, մասնավորապես հայերի ու ադրբեջանցիների՝ միմյանց նկատմամբ վերաբերմունքի դրսևորման վրա: Դրա հետքերով որոշ դեպքերում առկա էր թշնամու թաքնված գիտակցումը: Բանասացի վկայությամբ՝ երկու կողմերն էլ՝ և՛ հայերը, և՛ ադրբեջանցիները, գիտակցում էին ներքին թշնամանքի առկայությունը, սակայն թաքցնում էին[12]:

Ազգային զարթոնքի պատճառները կարող են տարբեր լինել: Նախընթաց ազգային շարժումներին ծանոթանալու և ազգային վերազարթոնքի ոգին սնող միջոցներ էին նաև տարբեր միջոցառումները, բայց առավելապես՝ գրականությունը և արվեստը: Այսպես, 1986 թ. առաջին անգամ Ծիծեռնակաբերդում դրվել էր ծաղկեպսակ՝ «Ղարաբաղի երիտասարդներից» մակագրությամբ[13]: Սա արտահայտումն է այն բանի, որ ազգային-պատմական հիշողությունը, մասնավորապես Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող հուշահամալիրը այլաբանորեն հանդես է գալիս որպես ազգային զարթոնքի դրսևորում:

---

[11] Меликянц 22.03.1988.

[12] Դաբաղյան, Գաբրիելյան 1996, ԴԱՆ, Արցախ, գ. Ճարտար, բանասաց՝ Քամալյան Նիքսոն, ծնվ. 1961 թ.:

[13] Դաբաղյան, Գաբրիելյան 1996, ԴԱՆ, Արցախ, Մարտունու շրջան, գյուղ Աշան, բանասաց՝ Իշխանյան Դավիթ, ծնվ. 1968 թ.:

Փոխհարաբերությունների պաշտոնական և առօրեական դրսևորումները կոնֆլիկտային իրավիճակում

Ինչպես ասվեց, ազգամիջյան լարվածությունը սկզբնական շրջանում դրսևորվում էր ներքին թշնամության գիտակցումով, որը թաքնված և առավել զգուշավոր բնույթ էր կրում հայերի մոտ, որովհետև նրանց մեջ առկա էր տվյալ պահին ավելի խոցելի լինելու մտայնությունը[14]: Այս մտայնության ու կարծրատիպերի առկայությունը, կարծում ենք, պայմանավորված էր Լեռնային Ղարաբաղի նախընթաց պատմությամբ ու ներկա իրավիճակով, երբ 1921 թ. Մոսկվայի կամայական վճռով Արցախի լեռնային հատվածը ևս տրվեց Խորհրդային Ադրբեջանին, իսկ վերջինիս ազգայինվարչական քաղաքականության հետևանքով այն վերածվեց հայկական «անկլավի»: Ժողովուրդը զգում էր իր կացության ողջ բարդությունը, և անվտանգության ու գոյապահպանության հավաքական զգացումը թելադրում էր ինքնակազմակերպման համապատասխան մակարդակ:

Բավական ուշագրավ է այն հանգամանքը, որ 1988 թ. փետրվարի 12-ի Մարտունու հանրահավաքին հայերի հետ մասնակցում էին նաև ադրբեջանցիներ[15]: Չմոռանանք, որ սա այն շրջանն էր, երբ դեռևս տեղի չէր ունեցել սումգայիթյան ողբերգությունը, և միջէթնիկական հարաբերություններում լարվածությունը չէր հասել կիզակետին: Փետրվարի 12-ի հանրահավաքին ադրբեջանցիների մասնակցությունը ի ցույց է դնում Ադրբեջանի կողմից իրականացվող քարոզչական և ներքին կազմակերպական քայլերի նշանակությունը հակահայկական տրամադրությունների բորբոքման առումով: Ընդգծենք, որ հանրահավաքի կազմակերպիչներն ու մասնակիցները ցուցաբերում էին ինքնակազմակերպման և ինքնատիրապետման բարձր մակարդակ: Հանրահավաքի մասնակից հայերը զգուշացվել էին որևէ կերպ չվիրավորել մասնակից ադրբեջանցիներին: Նշենք, որ Արցախյան շարժման սկզբնական փուլում արդեն հետաքրքիր դրսևորում ունեին հայ-ադրբեջանական միջէթնիկ հարաբերությունները: Այսպես, փետրվարի 12-ի հանրահավաքը կրում էր ավելի շատ ինտերնացիոնալիստական բնույթ, այնտեղ առկա էին «Живой вопрос живой жизни», «Ленин, Партия, Горбачев», «Сталин, Берия, Лигачев» կարգախոսներով ցու-

[14] Դաբաղյան, Գաբրիելյան 1996, ԴԱՆ,Արցախ, գ. Ճարտար, բանասաց՝ Քամալյան Նիքսոն, ծնվ. 1961 թ.:

[15] Դաբաղյան, Գաբրիելյան 1996, ԴԱՆ, Արցախ, գ. Բերդաշեն, բանասաց՝ Մովսիսյան Էդուարդ Արտաշի, ծնվ. 1951 թ., բարձրագույն:

ցապաստառներ[16]: Ուշագրավ է այդ հանրահավաքին մասնակցող ադրբեջանցիների դիրքորոշումը: Ադրբեջանական կարգախոսներ պարունակող ցուցապաստառները պատրաստված էին հենց ադրբեջանցիների կողմից, իսկ Խոջավենդ գյուղից հատուկ պատվիրակություն էր եկել շրջկոմ՝ հայտնելու իրենց համաձայնությունը և համերաշխությունը Խորհրդային Հայաստանին միանալու պահանջին[17]: Հետագայում, երբ սկիզբ էին առել բախումները, երբեմն հանդիպել են զինված հայերն ու ադրբեջանցիները և ճանաչելով միմյանց՝ ողջագուրվել են[18]: Հայերի ու ադրբեջանցիների խաղաղ փոխգործակցության այլ օրինակներ նույնպես եղել են, նաև գյուղական համայնքներով կոնֆլիկտային իրավիճակում ինքնակազմակերպվելու փորձեր[19]:

Ճիշտ է, հայտնի է, որ կոնֆլիկտը միավորում է էթնիկ խմբին, սակայն դա ամենևին էլ չի նշանակում, որ այդ խմբի բոլոր անդամներն էլ հավասարաչափ ներառված են դրանում կամ թերևս ունեն դրա ակտիվ անդամների դիրքորոշումը: Նման փաստեր առկա են նաև այլ կոնֆլիկտներում, տիպական օրինակներից է արաբա-իսրայելական հակամարտությունը, որի դեպքում էլ Աբու-Գոշեի արաբները որևէ մասնակցություն չունեցան դրան[20]: Այնուամենայնիվ, իրադարձությունները մի փոքր այլ կերպ զարգացան Լեռնային Ղարաբաղում: Այստեղ Ադրբեջանի տարածքում բնակվող կովկասալեզու սունիները և իրանալեզու շիաները (թաթեր, լեզգիներ, թալիշներ, հափութլիներ) 1905-1907, 1918-1920 թթ. հիմնականում չեն մասնակցել թյուրքալեզու շիաների և օսմանյան սուննիների կազմակերպած հայկական ջարդերին, բազմաթիվ հիշատակություններ և բանավոր պատմություններ կան 1988-1990 թթ. Բաքվում, Սումգայիթում, Վարդաշենում, Իսմայիլիի շրջանում նրանց կողմից օգնություն ցուցաբերելու մասին[21]: Իրադրությունը փոխվեց արդեն Բաքվի ներգործությունից հետո, և այն ազդեց ադրբեջանցիների տրամադրությունների ու մտայնությունների վրա, հատկապես այն ժամանակ, երբ Ադրբեջանում կազմակերպվեց

---

[16] Դաբաղյան, Գաբրիելյան 1996, ԴԱՆ, Արցախ, բանասացներ՝ Գասպարյան Հենրիխ Վազգենի, ուսուցիչ, Հարությունյան Սենորիկ Բաբկենի, ուսուցիչ:

[17] Դաբաղյան, Գաբրիելյան 1996, ԴԱՆ, Արցախ, բանասացներ՝ Գասպարյան Հենրիխ Վազգենի, ուսուցիչ, Հարությունյան Սենորիկ Բաբկենի, ուսուցիչ:

[18] Михайлов 24.11.1989.

[19] Гусейнова, Акопян, Румянцев 2008.

[20] Шнирельман 2012, 5.

[21] Խառատյան 2016, 79:

«Ազգային ճակատը»: Բաքվից ուղղորդումները, բնական է, միջէթնիկ հարաբերություններում մեծացնում էին լարվածության մակարդակը և հանգեցնում նաև բախումների: Բախումները տեղական մակարդակի էին, սկզբնական շրջանում արտահայտվում էին ավտոբուսների և ավտոմեքենաների քարկոծումներով: Այս հուզումները շղթայական ռեակցիայով շուտով ավելի համընդհանուր էին դառնալու: Եվ եթե, այդպիսով, Արցախյան շարժումը դիտարկենք որպես հստակ գործընթաց, ապա պետք է արձանագրել, որ շարժումը ստորագրությունների հավաքման առումով սկսվել էր դեռևս 1987 թ. հուլիս-օգոստոս ամիսներին, իսկ համաժողովրդական առաջին զանգվածային միջոցառումը Մարտունիի հանրահավաքն էր: Սկզբնական շրջանում (1987 թ. ամռանից) ստորագրություններ հավաքվում էին միայն մշակութային հուշարձանների պահպանման և վերականգնման համար[22]: Այսինքն, Արցախյան հիմնահարցի նորօրյա արծարծումները սկսվեցին մշակութային պահանջներով: Այս կերպ բարձրանում էր ժողովրդի ազգային գիտակցությունը, կարևոր գործոն էր դառնում պատմական հիշողությունը, որի միջոցով էլ պետք է իրականանար համախմբումն ազգային կարևորագույն խնդիրների շուրջ:

Եզրակացություններ

Էթնիկ անվստահությունը փոխադարձ էր. Խորհրդային Ադրբեջանը ԼՂԻՄ-ում ղեկավար պաշտոններում հիմնականում նշանակում էր ազգությամբ ադրբեջանցիների, իսկ հայերի կողմից անվստահությունն արտահայտվում էր սոցիալ-մասնագիտական մակարդակում, երբ շինարարական աշխատանքների ժամանակ հայ վարպետները խուսափում էին իրենց մասնագիտական նրբությունները բացահայտել ադրբեջանցիների ներկայությամբ: Փաստենք, որ 1950-ական թթ. Շուշիում առկա կիսաքանդ մոտ 10-12 եկեղեցիներն ավերվել էին ադրբեջանական իշխանությունների նախաձեռնությամբ՝ քաղաքի արդիականացման կարգախոսի ներքո: Ամենաուշագրավն այն է, որ եկեղեցիները քանդելու համար գործուղվում էին հայկական շինջոկատներ[23]: Իհարկե, 1930-ական թթ. ստալինյան բռնաճնշումների, աթեիստական գաղափարաբանության տիրապետութ-

[22] Դաբաղյան, Գաբրիելյան 1996, ԴԱՆ, Արցախ, գ. Բերդաշեն, բանասաց՝ Մովսիսյան Էդուարդ Արտաշի, ծնվ. 1951 թ., բարձրագույն:

[23] Դաբաղյան, Գաբրիելյան 1996, ԴԱՆ, Արցախ, ք. Շուշի, բանասաց՝ Հարությունյան Աշոտ, ծնվ. 1957 թ., կրթությունը՝ բարձրագույն:

յան պայմաններում, երբ նույնիսկ հայկական բնակավայրերում եկեղեցիները և մատուռները օգտագործվում էին որպես կոլտնտեսության պահեստներ, ժողովուրդների եղբայրության և բարեկամության գաղափարական երանգավորումով նման ձեռնարկը ներկայացվում էր որպես խորհրդային ապրելակերպի արդիականացման սովորական, հերթական դրսևորում: Ադրբեջանական իշխանությունների քաղաքական հաշվարկներն ունեին հեռահար նպատակներ. հետագայում, երբ հայկական կողմը փորձեր Խորհրդային Ադրբեջանին մեղադրել մշակութային խտրական քաղաքականություն վարելու մեջ, վերջինս չքմեղանալու էր՝ մատնանշելով, որ տվյալ պատմամշակութային հուշարձանները քանդվել են հենց հայերի ձեռքով: Հայ-ադրբեջանական միջէթնիկ հարաբերությունների մինչխորհրդային շրջանի առանձին դրվագներ պատմական հիշողության մեջ գտել են սեփական մեկնաբանությունները՝ հիմք ունենալով բանավոր հիշողությունը:

Գրականություն

Դաբաղյան Ա., Գաբրիելյան Մ., ԴԱՆ (բանասաց՝ Ղուկասյան Սևակ, ծնվ. 1969 թ.):

Դաբաղյան Ա., Գաբրիելյան Մ., ԴԱՆ, ԼՂՀ գ. Ճարտար (բանասաց՝ Քամալյան Նիքսոն, ծնվ. 1961 թ.):

Դաբաղյան Ա., Գաբրիելյան Մ., ԴԱՆ, ԼՂՀ Մարտունու շրջան, գ. Աշան (բանասաց՝ Իշխանյան Դավիթ, ծնվ. 1968 թ.):

Դաբաղյան Ա., Գաբրիելյան Մ., ԴԱՆ, ԼՂՀ գ. Բերդաշեն (բանասաց՝ Մովսիսյան Էդուարդ Արտաշի, ծնվ. 1951 թ., բարձրագույն):

Դաբաղյան Ա., Գաբրիելյան Մ., ԴԱՆ (բանասացներ՝ Գասպարյան Հենրիխ Վազգենի, ուսուցիչ, Հարությունյան Սենորիկ Բաբկենի, ուսուցիչ):

Դաբաղյան Ա., Գաբրիելյան Մ., ԴԱՆ, ԼՂՀ ք. Մարտունի (բանասաց՝ Հարությունյան Սենորիկ Բաբկենի, ուսուցիչ):

Դաբաղյան Ա., Գաբրիելյան Մ., ԴԱՆ, ԼՂՀ ք. Շուշի (բանասաց՝ Հարությունյան Աշոտ, ծնվ. 1957 թ., կրթությունը՝ բարձրագույն)

Խաչատրյան Ա., ԴԱՆ 2008, Զանգակատուն: Խառատեան Հ. 2012, «Ադրբեջանցիները», «կովկասալեզուները» եւ «իրանալեզուները». Ինքնութեան զարգացումներն Ադրբեջանում, «Հանդէս Ամսօրեայ» ՃԻԶ տարի, Վիեննա-Երևան, էջ 271-335:

Խառատյան Հ. 2016, «Էթնիկ օգնության» պատմա-քաղաքական պատճառաբանությունը (Շամախու Գարդման-Գեոկչայի գավառ-Իսմայիլիի շրջան), «Գարդմանի և Շիրվանի հայության պատմա-մշակութային ավանդ-

ները (պատմություն և արդիականություն)», Հանրապետական գիտաժողով (ապրիլի 29-30, 2016 թ.), Զեկուցումներ և զեկուցումների դրույթներ, Երևան, «Գիտություն», էջ 78-110:

Арутинов А.А. 1905, Удины (Материалы для антропологии Кавказа), Известия Императорского Общества любителей естествознания, антропологии и этнографии, состоящего при Императорском Московском университете. Труды Антропологического отдела, т. XXIII, Москва, изд. не указано, 108 с.

Всесоюзная перепись населения 1939 года. Национальный состав населения по республикам СССР. Азербайджанская ССР http://www.demoscope.ru/weekly/ssp/sng_nac_39.php?reg=5 (30.03.2020).

Гусейнова С., Акопян А., Румянцев С. 2008, Кызыл-Шафаг и Керкендж: история обмена селами в ситуации Карабахского конфликта, Тбилиси, ФГБ Heinrich Böll Stiftung, South Caucasus, 148 с.

Дардыкин С., Лынев Р.1988, Встречи после митингов, Известия, 24.03.

Дзидзоев В. 2000, Национальные отношения на Кавказе, Владикавказ, изд. не указано, 239 с.

Меликянц Г. 1988, Не было готовых образцов в развитии национальных отношений – об этом размышляют историки Л. Дробижева и Ю. Поляков, Известия, 22.03.

Михайлов М. 1989, Абсурд и искажение фактов, Советский Карабах, N 268 (2398), 24.11.

Харатян Г. 2015, Официальные этнодемографические показатели в Азербайджане в контексте поиска и кризиса идентичности азербайджанцев. Удины: крах всех усилий самосохранения, Москва, «Центриздат», 136 с.

Шнирельман В.А. 2012, Глобализация и конфликты, отв. ред. В.А. Тишков, Шнирельман В.А., Этничность и религия в современных конфликтах, Институт этнологии и антропологии им. Н.Н. Миклухо-Маклая РАН, Москва, «Наука», с. 4-22.

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՆ ՈՒ ԱՌՕՐԵԱԿԱՆԸ ՀԱՅ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ (ԱՐՑԱԽԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

Արտակ Խաչատրյան

Ամփոփում

Խորհրդային շրջանում հայերի և ադրբեջանցիների փոխհարաբերությունները, դրանց պաշտոնական և առօրեական բաղկացուցիչները ձևավորվել էին «ինտերնացիոնալ բարեկամության» քաղաքականության հարկադրյալ

մթնոլորտում: Խորհրդային կենտրոնական իշխանությունների և արևելյան Անդրկովկասում խորհրդային հռչակված Ադրբեջանի շահերը փոխադարձաբար համընկնում էին հեղափոխությունը Արևելք արտահանելու և քեմալական Թուրքիայի հետ հարաբերությունները պահպանելու առումով: Ուստի Խորհրդային Ադրբեջանի նկատմամբ ԽՍՀՄ կենտրոնի բարյացակամ վերաբերմունքը և որոշակի հանդուրժողականությունը ներքաղաքական հարցերում բացատրվում են այդ քաղաքականության համատեքստում: Այն իր տրամաբանական արտահայտությունը ստացավ նաև հայ-ադրբեջանական հարաբերություններում խորհրդային շրջանում: Հազվադեպ չեն օրինակները, երբ շփումների առօրեական մակարդակը ամենևին էլ հագեցած չէր էթնիկ և կրոնական հիմքի վրա առաջացած լարվածությունով: Առկա են օրինակներ, երբ հայերը և ադրբեջանցիները կարողացել են փոխշփումների համար ընդունելի մոդելներ գտնել, որոնք բավական կենսունակ են եղել: Սակայն Խորհրդային Ադրբեջանում հատկապես 1930-ական թթ. պաշտոնապես սկիզբ առած ազգակերտման և սեփական պատմությունը ստեղծելու գործընթացը արտացոլվեց նաև առօրեական փոխշփումներում:

Բանալի բառեր՝ Ղարաբաղյան հակամարտություն, Խորհրդային Միություն, պատմական հիշողություն, «թշնամու կերպար», բանավոր հիշողություն, ԼՂԻՄ, Խորհրդային Ադրբեջան:

ОФИЦИАЛЬНОЕ И ПОВСЕДНЕВНОЕ В АРМЯНО-АЗЕРБАЙДЖАНСКИХ ОТНОШЕНИЯХ В СОВЕТСКИЙ ПЕРИОД (НА ПРИМЕРЕ АРЦАХА)

Артак Хачатрян

Резюме

Интересы центральных советских властей и провозглашенного советским Азербайджана в Восточном Закавказье совпадали в плане экспорта революции на Восток и отношений с кемалистской Турцией. Поэтому доброжелательное отношение и определенная толерантность центра СССР к Советскому Азербайджану во внутриполитических вопросах были обусловлены этой политикой, которая нашла свое логическое отражение и в армяно-азербайджанских отношениях в советский период. Нередки примеры, когда повседневный уровень этих контактов отнюдь не отличался напряженностью на этнической и религиозной основе. Более того, в ряде случаев армяне и азербайджанцы смогли найти приемлемые модели для

взаимных контактов, которые были достаточно жизнеспособными. Однако в Советском Азербайджане, особенно в 1930-х годах, официально начавшийся процесс формирования нации и создания собственной истории нашел отражение в повседневных взаимоотношениях.

Ключевые слова – Карабахский конфликт, Советский Союз, историческая память, «образ врага», устная память, НКАО, Советский Азербайджан.

THE OFFICIAL AND THE EVERYDAY IN ARMENIAN-AZERBAIJANI RELATIONS IN THE SOVIET PERIOD (THE CASE OF ARTSAKH)

Artak Khachatryan

Abstract

One of the important subjects of modern political anthropology is the complex of relations and contacts between states/communities in conflict. The article discusses the relationship between the Armenians and Azerbaijanis in the Soviet period in the forced atmosphere of the slogan "International friendship", as well as the official and everyday components of these mutual relations. The interests of the Central Soviet authorities and the already declared Soviet Azerbaijan in the Eastern Transcaucasia mutually coincided with the export of the revolution to the East and relations with the Kemalist Turkey. Therefore, the friendly attitude and certain amount of tolerance of the Center of the USSR towards the Soviet Azerbaijan in domestic political issues is explained in the context of this policy, which found its logical expression in the Armenian-Azerbaijani relations during the Soviet period. There are not rare instances when there were not any ethnic or religious tension on the daily level of these relations. Moreover, there are examples when Armenians and Azerbaijanis were able to find models acceptable for mutual contacts that were quite viable. However, in the Soviet Azerbaijan the process of forming a nation and creating own history, which officially began in the 1930s, was also reflected in everyday interactions.

Key words – Nagorno-Karabakh conflict, Soviet Union, historical memory, "image of the enemy", oral memory, NKAR, Soviet Azerbaijan.